№ [illegible] ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐ 31

1896

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐ 31 № [illegible]

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. իւրաքանչիւր տողին 1 շահի:

## ԲԱՑՒԵԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

### Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ“ Ա. Տ.

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 Ֆրանկ վեցամսեա 5 ֆ: Թէհրանում ձեռքով ծախւածները հատը 6 շահի: Բաժանորդագինը կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան: ·ՒՇԲ·

---

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Պարսկահայի բռնաբարուած իրաւունքներից մէկը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղափարի անդրանիկ մարտիրոսներ. Նամակներ Թէհրանից. Նամակ Ռաշտից ԲԺՇԿԱԿԱՆ ինֆլուէնցիայ. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւրոպայի տէրութիւնների միութիւնը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—Աստղ-Արեւելեանի պատասխաններ. Դրամոց արժէք. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Հայկական գրականութեան ոսկեդարը 500 թւականին: Ամուսնութիւնն պարսկահայոց մէջ:

---

### ՊԱՐՍԿԱՀԱՅԻ ԲՌՆԱԲԱՐՈՒԱԾ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԷԿԸ

----

Չենք ուզում խօսել այն մասին, թէ ընդհանուր Պարսկաստանի (Հնդկաստանըն էլ հետը հաշուելով) երկու եպիսկոպոսական վիճակների 50,000 ժողովուրդը, որքան պէտք ունի անհրաժեշտ բարեմասնութիւններով օժտուած առաջնորդների. դրա վրայ հազար անգամ գրուած է և բիւր անգամ խօսուած:

Սակայն Էջմիածինը մինչեւ այսօր առանց այդ կարեւոր բողոքի ձայնին կարեւորութիւն տալու, քմահաճոյքով է միշտ իւր սեղանի փշրանքով միայն գոհացնել այդ երկու լայնածաւալ վիճակները:

Էջմիածինը՝ Պարսկահային զրկել է միշտ այն միակ իրաւունքից, որ թոյլ է տրուած հայաստանեայց եկեղեցուն ժողովրդական ազատ եկեղեցի կոչուելու:

Թէ ինչ է նշանակում ժողովրդական ազատ եկեղեցի, դուցէ մեր պարսկահայերից շատերին անծանօթ լինի:

Մեր եկեղեցու այդ առանձնաշնորհումը հաստատւում է այն հիման վրայ, որ նոյն եկեղեցու ամենայն պաշտօնեայից սկսած մինչեւ կաթուղիկոսը, պէտք է ընտրուի ժողովրդի միաձայն հաւանութեան քուէով: Ժողովուրդը ընտրում է մի տիրացու, քահանայ, վարդապետ, եպիսկոպոս և կաթուղիկոս ու առաջարկում բարձրագոյն ատեանին, որ հաստատէ: Իսկ Պարսկաստանի հային այդ իրաւունքը կատարելապէս անծանօթ է: Էջմիածինը իւր ցանկացած վարդապետը, առաջնորդը փաթաթում է մեր շլինքին առանց կանխօրէն մեր կամքը հարցնելու. իսկ այդ ձեւով պաշտօնի գլուխ անցած եպիսկոպոսն էլ, ցանկացած մարդին քահանայ է ձեռնադրում, առանց ժողովրդի համաձայնութիւնը ստանալու. պատահում է և սակաւ դէպքեր, օրինակ մի անգամ ժողովուրդը հակառակ է լինում 7 անյայտ մարդերի քահանայ դառնալուն, եպիսկոպոսը առնում է տիրացուներին չուում մի մօտակայ գիւղ, գիշերանց մտնում եկեղեցին և բոլորին էլ քահանայ ձեռնադրում: Այդ կամայականութիւնը ներելի էր քառորդ դար առաջ, բայց այս օր որ պարսկահայ ժողովուրդն էլ պահանջում է իւր աթոռը ազգայնութեան ընդհանուր ժողովում, կարծում ենք իրաւունք ունի պահանջելու որ այլ եւս վերջ տրուի այդ կամայականութեանց:

Այսօր Ատրպատականի առաջնորդական աթոռը թափուր է, Ջուղայինն էլ նրա նման մի բան, որովհետեւ ասում են Եսայի եպիսկոպոսը մեկնած է, եթէ մեկնած էլ չէ, պիտի մեկնէ շուտով որովհետեւ նրա ներկայութիւնը այլ եւս ձանձրալի է, նրան պէտք է հանգստութիւն, իսկ Պարսկաստանին մի այլ եպիսկոպոս:

Արդ, այդպիսի առաջնորդների ընտրութեան ձեւը ցանկալի կը լինէր, որ դուրս գար իւր հնադարեան կերպարանքից և հայկական միւս թեմերի ընդունած սիստեմի համաձայն կատարուէր,

Պէտք է ամբողջ Պարսկաստանի հայ ժողովուրդը ձայնի առաւելութեամբ ընտրէ այդպիսի առաջնորդները և ներկայացնէ հոգեւոր բարձր իշխանութեան ի հաստատութիւն:

Մենք պատրաստւում ենք ընտրելի եպիսկոպոսների մի ցանկ, որ պիտի փութանք ներկայացնել հասարակութեան, որքան կարելի է շուտ, որի միջից նա կարող է ընտրել իւր ցանկացածը:

Վաղարշակ բժշկեանց.

---

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

---

#### ԳԱՂԱՓԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ

----

Հինգերորդ դարը մեր պատմութեան մէջ յայտնի է և կրօնական հալածանք անունով. այդ հալածանքը յառաջ բերաւ և Վարդանանց պատերազմը:

Հայաստանը՝ իւր պատմութեան մէջ երեւում է երբ պատերազմի, աւերածութեան մի դաշտ, բայց ոչ մի պատերազմի լիշատակին այնքան եկեղեցականութեամբ չէ վերաբերուել հայը, ոչ մի անցքի համար այնքան մեծ տեղ չէ տուել իւր սրտում, որպէս վերջինին: Որովհետեւ այդ պատերազմը չէ կատարուել մի որեւէ թագաւորի կամ իշխանի փառքի համար, այլ եղել է հասարակ ժողովրդի բռնաբարուած իրաւունքը պաշտպանելու նպատակով:

Հինգերորդ դարի հայ կանոնը բանակը ծառայում էր մի դրօշակի, միայն որի վրայ գրուած էր իրաւունք կամ մահ:

Այդ օրերից թէեւ անցնում է աւելի քան 1400 տարի, սակայն այսօրուայ հայն եւս կրկին պէտք է զգում պարզելու այդ դրօշակը, այսօր եւս նա հարկադրուած է ճիգեր գործել, փշրելու համար այն ծանր շղթաները, որոնցով ձգտում են կաշկանդել իւր զգացումները: Այսօր եւս նա ստիպւում է համոզուել, որ իրաւունքը գտնւում է մի այնպիսի բարձրութեան վրայ, որին հասնելու համար, պատրաստ ենք զինակներից կազմուած սանդուղքով վերելակել: Սակայն 1400 տարի առաջ այդքան հայ կինը չէր ներկայացնում այն մեռած, թուլամորթ և անզգայ կնոջ տարրը, ինչ որ այսօր: Իրաւունք կամ մահ, ահա նրա դաւանած իդէալը:

Այն նահապետական պարզութեամբ ցուցուած հայ կինը, որ իւր երկրի տիրո եւ սրբութեանց կողքը դաւանում երգում էր նրանով, իւրն էր ձեռքով իր կերակրում ազգը, սիրած և փայփայած որդը, երբ վերջինս ցանկութիւն չէր յայտնում մարել հայրենիքի, ազգութեան և գաղափարի ազատութեան համար: Այդ պատերազմում հայն եւ ունեցաւ Ծան Փարւեր, որոնք իրենց սուրը ոխերիմ մարտի եէ կանգնում

